

ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ ԵՒ ՀԵՏԱԳԱՅ ԸՆԹԱՑՔԸ

Ս. Էջմիածնի Հոգևոր նեմարանը հիմնադրուել է 1874 թուականին Գեորգ Գ. Կոստանդնուպոսեցի կաթողիկոսի կողմից: Դեռևս 1866 թուականին, Ռուսաց ցարից իր կաթողիկոսության հաստատումը ստանալու համար գտնուելով Ս. Պետրբուրգում, նա բանակցություններ է վարել նաև հոգևոր բարձրագույն դպրոց բացելու վերաբերեալ: Բազմաթիւ առաջարկներ եղան Հոգևոր նեմարանը Ռուսաստանի հայաշատ քաղաքներից մէկում կամ Արեւմտահայաստանում հիմնելու համար: Գեորգ Գ. Կաթողիկոսը կտակարանապէս մերժեց բոլոր առաջարկությունները եւ նեմարան հիմնադրելու վայր ընտրեց Ս. Էջմիածինը:

1876 թուականի Ապտեմբերի 28ին կաթողիկոսի օժման օրը, ցարական կառավարությունից բացման վերաբերեալ ղեկ վերջնական բաշխուտիւն չստացած, նոյն հանդէսով բացուեց դպրոցը: Գեորգեան նեմարանին վիճակուած էր մեծ ու պատուաւոր դեր կատարելու Հայ Եկեղեցու եւ հայ իրականութեան մէջ, իր կոչման եւ պարտականութեան գիտակից, շերմեռանդ ու հայրենասէր, բարեկիրք, բազմակողմանի զարգացած նոր հոգևորականութեան պատրաստման գործում: Եւ իրո՞ք՝ նեմարանն առատ հունձն ունեցաւ:

Իր գոյութեան քառասունեօթ տարիների ընթացքում (1874-1917) Գեորգեան նեմարանը Հայ Եկեղեցուն նուիրեց բարձրաստիճան հոգևորականների փառաւոր սերունդ, ինչպէս նաև մեծավաստակ հայագէտներ, լեզուաբաններ, պատմաբաններ, երաժշտագէտներ, մանկավարժներ ու հասարակական գործիչներ: Ահաւասիկ նեմարանի շրջանաւարտներից մի քանիսի անունները՝ Գեորգ Զ. Կաթողիկոս Զորեմեջեան, Գարեգին Ա. Կաթողիկոս Յովսէփեան, Կարապետ Եպս. Տէր-Մկրտչեան, Կոմիտաս վարդապետ, Երուանդ Տէր-Մինասեան, Արշակ Տէր-Միքայէլեան, Մանուկ Աբեղեան, Նիկողայոս Ադոնց, Ստեփան

Մալխասեան, Աւետիք Իսահակեան, Ակսել Բակունց, Առն Շանթ:

Առաջին համաշխարհային պատերազմի ողբերգական օրերին դժուարին կացութեան մէջ յայտնուեց Գեորգեան նեմարանը: Գարեգին Եպս. Յովսէփեանի վերատեսչութեան տարիներին, երբ ամբողջովին սպառել էին գոյութեան նուագագույն պայմանները, 1917 թուականին փակուում են նեմարանի դռները, եւ այս հոգևոր կրթօջախը լռում է մինչև 1945 թուականը: Այդուհանդերձ, արդէն 1921 թուականից սկսում են նեմարանը վերաբացելու փորձերը: Այդ ուղղութեամբ քայլեր են առուել Գեորգ Ե. Սուրենեանց, Խոբէն Ա. Մուրադբեկեան եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Ա. Յովսէփեան կաթողիկոսների կողմից: Ի վերջոյ երազանքն իրականութիւն դարձաւ շնորհիւ Գեորգ Զ. Զորեմեջեանի եռանդալից գործունէութեան: Երջանկայիշատակ Հայրապետ, ղեկ նախնան իր կաթողիկոսական ընտրությունը, բազմիցս շեշտել էր նեմարանի բացման անհրաժեշտութիւնը եւ Ազգային եկեղեցական ժողովին ներկայացրել իր ծրագրերը:

1945 թուականի Յունիսի 24ին Մայր Տանարում տեղի ունեցաւ Ամենայն Հայոց կաթողիկոսի Տ. Տ. Գեորգ Զ. Զորեմեջեանի օծումը, եւ նա անմիջապէս իր առաջին խակունդակում անդրադարձաւ Հոգևոր նեմարանի խնդրին: Եւ ահա, երկարամեայ ընդմիջումից յետոյ, Հոգևոր նեմարանի դռները կրկին բացուում են, որպէս զի բնորոշ են հաստացեալ հայորդիներին, եւ սկսուի նեմարանի պատմութեան մի նոր շրջանի կերտումը:

Հոգևոր նեմարանը յիսուն տարիների ընթացքում տուել է շուրջ երկու հարիւր շրջանաւարտ: Ճեմարանի պատուաւոր շրջանաւարտներից են այսօր Հայաստանի բոլոր բնմիրի առաջնորդներն ու փոխառաջնորդ վարդապետները, ինչպէս նաև արտասահմանեան վեց բնմիրի Ռուսաստանի,

Ուկրինայի, Հիսսիսային Կովկասի, Ռումինիայի, Ռուս գվայի և Կանադայի առաջնորդ սրբազան հայրերը:

Վերաբացուած Հոգեւոր նեմարանը յիսնամեայ գործունէութեան ընթացքում ունեցել է 11 տեսուչ. Պրն Մինաս Մինասեան (1945-1954թթ.), Մարտիրոս Տէր Ստեփանեան (1954-1956թթ.), Հայկազուն Եպս. Արքաեամեան (1957-1964), Ներսէս Վրդ. Պոգապալեան (1965-1969թթ.), Շնորհք Վրդ. Գասպարեան, (1969-1970), Յովհաննէս Քինյ. Մարութեան (1971-1973), Արիս Ծ. Վրդ. Շիրվանեան (1973-1974), Յովհաննէս Ա. Քինյ. Մարութեան (1974-1979), Գրիգորիս Վրդ. Բունիաթեան (1979-1980), Եզնիկ Քինյ. Պետրոսեան (1980-1989), Անանիա Եպս. Արարաջեան (1989-1995), Ներսէս Արք.

Պոգապալեան (1991-1995), Հայկազուն Ծ. Վրդ. Նաջարեան (1995ից):

(1956-57) ուսումնական տարում նեմարանը չունեցաւ տեսուչ, այլ փոխտեսուչ՝ Մեսրոպ Արդ. Այնթաբեան, իսկ 1964-196, ուսումնական տարում տեսչի պարտականութիւնները կատարեց Յովհաննէս Քինյ. Մարութեանը):

Բոլոր տեսուչներն էլ իրենց պատուաւոր տեղն ունեն Հոգեւոր նեմարանի պատմութեան էջերում, որովհետեւ լաւագոյն կերպով են կատարել իրենց պարտականութիւնը և յաղթահարելով խորհրդային շրջանին յատուկ գաղափարախօսական ու այլ կարգի խոչընդոտները, կարողացել են նուիրեալ և ուսեալ հոգեւորականների սերունդներ անցնել:

ՀՈԳԵՒՈՐ ՀՅՄԱՐԱՆՆ ԱՅՍՕՐ

1995 բուականին Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Հայրապետի հրաւերով Ա. Էջմիածին է ժամանում Ամերիկայի Միացեալ Նահանգների Արեւելեան Թէմի Առաջնորդական փոխանորդ՝ Տ. Հայկազուն ծայրագոյն վարդապետ Նաջարեանը և Վեհափառի կարգադրութեամբ ստանձնում է նեմարանի տեսչի պաշտօնը: Այս փոփոխութիւնից յետոյ Հոգեւոր նեմարանում կատարուած են դրական փոփոխութիւններ ուսանողութեան կարգապահութեան ամրապնդման, կենցաղային կարիքների բարելաման և ուսումնակրթական գործընթացի կատարելագործման ուղղութեամբ:

Այս փոփոխութիւնները հնարաւորութիւն տուեցին ուսանողութեան թիւը չի անցել բառասունից (Չպէտք է նաեւ մոռանալ որ Եկեղեցին է հոգում նեմարանի սաների քանակապէս բոլոր կենցաղային հոգսերը):

Այսօր Վեհափառ Հայրապետի նախաձեռնութեամբ արդիւնաւէտ աշխատանքներ են կատարուած Գէորգեան նեմարանի շէնքի վերանորոգման ուղղութեամբ: Հայր Հայկազունը 1996թ. ուսումնական տարուայ քաջման հանդիսութեան ժամանակ իր խօսքում նշեց «Յուսով ենք որ մօտ ապագայում երբ Գէորգեան նեմարանի նախկին շէնքը պատրաստ լինի շահագործման համար և երբ ստեղծուեն

բաւարար պայմաններ, մենք ուսանողների թիւը կը հասցնենք երկու հարիւրի, որովհետեւ այսօր, առաւել քան երբեւիցէ, այժմէական են մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի հետեւեալ խօսքերը. «Հունձք բազում են և մշակք սակաւ»:

Բազում սերունդներ են կրթուել նեմարանի սրբազան հարկի ներքոյ, ժամանակն անցել է, քայց մնացել են նեմարանականների քարի ու յիշարժան գործերը: Այսօրուայ ուսանողները, ոգեւորուած Հայոց հերոսական պատմութեամբ, որի մի քախոյորոջ ժամանակաշրջանի ականատեսն ենք մենք, կրկին անգամ ուխտում են անձնուրաց կերպով նուիրուել Հայ եկեղեցում և հայ ժողովրդին ծառայելու վեհ նպատակին:

Արդ, քարի երբ մաղթենք մեր հարազատ նեմարանին և արժանի լինենք նեմարանականի քարճր կոչմանը:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍՐԿ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ